Հայտարարություն ֆիզկուլտուրա առարկայի թափուր ժամերի վերաբերյալ

«ՀՀ Արագածոտնի մարզի Դիանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենությունը հայտարարում է մրցույթ՝ ֆիզկուլտուրայի (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները հանձնաժողով են ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

1. **Դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի**
2. **Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),**
3. **Անձը հաստատող փաստաթուղթ,**
4. **«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),**
5. **Ինքնակենսագրություն (Ձեւ 5),**
6. **Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,**
7. **ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,**
8. **Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթերը (առկայության դեպքում),**
9. **Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:**

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ դեկտեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 20-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Դիանի հիմնական դպրոցում. հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Դիան:

Տեղեկությունների համար զանգահարել 094-51-53-36 հեռախոսահամարով: